ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Գարիկ Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության ծրագրերի գնահատման և ներքին աուդիտի քաղաքականության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Քիշնև, Մոլդովայի Հանրապետություն, 2025 թվականի ապրիլի 2-ից 6-ը

3. Հրավիրող կողմը՝

Մոլդովայի Հանրապետության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Մոլդովայի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված և ԵՄ կողմից ֆինանսավորվող հանրային ներդրումների կառավարման վերաբերյալ աշխատաժողովին՝ որպես ՀՀ փորձը ներկայացնող խոսնակ:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովը նվիրված էր տարածաշրջանի երկրներում հանրային ներդրումների կառավարման համակարգերի վերաբերյալ փորձի փոխանակմանը՝ հիմնական ուշադրության կենտրոնում ունենալով Մոլդովայի Հանրապետությունում վերջին տարիներին ԵՄ աջակցությամբ ներդրված համակարգի կառուցվածքը և արդյունավետությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են Մոլդովայի, Վրաստանի, Մոնտենեգրոյի, ինչպես նաև Հայաստանի հանրային ներդրումների կառավարման (ՀՆԿ) համակարգերը, դրանց առավելությունները և հիմնական զարգացման ուղղությունները, ինչպես նաև պլանավորվող բարեփոխումները: Իմ կողմից ելույթի տեսքով ներկայացվել է ՀՀ-ում գործող ՀՆԿ համակարգը, առավելությունները և հիմնական մարտահրավերները, ինչպես նաև դրա հետ կապված ընթացիկ ինստիտուցիոնալ փոփոխությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Առկա չեն:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Առկա չեն:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

09 ապրիլի, 2025թ.